ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈԴԵՐԻ* ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բանկը **յուրաքանչյուր կրեդիտի**** տրամադրման դեպքում հաճախորդին տրամադրում է այդ կրեդիտը նույնականացնող վարկային կոդ, հնարավորություն ընձեռելով կրեդիտառուին կամ կրեդիտառուի պարտավորությունների դիմաց վճարում (մարում) իրականացնող անձին վարկային կոդի կիրառմամբ (մուտքագրմամբ) իրականացված գործարքների պարագայում ուղղակիորեն (առանց ընթացիկ կամ հաճախորդի այլ հաշիվներին գումարի մուտքագրման) իրականացնել կրեդիտի գծով առկա պարտավորությունների դիմաց վճարում (մարում)՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով:
Վարկային կոդի տվյալները ներառվում են հաճախորդի հետ կնքվող համապատասխան կրեդիտի տրամադրման պայմանագրում:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՀՆԱՐԱՎՈՐ Է.

- Իրականացնել կրեդիտային պարտավորությունների, այդ թվում նաև՝ այլ բանկերի կամ վարկային կազմակերպությունների նկատմամբ առկա, վճարումը (մարումը),
- ստանալ Վարկային կոդի կիրառմամբ կատարված գործարքների (այդ թվում՝ մարումների) մասին տեղեկատվություն,
- Ծանոթանալ հաճախորդի առկա կրեդիտային պարտավորություններին և դրա հետ կապված այլ տեղեկություններին:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝

- Վճարում կատարելիս վարկային կոդը կիրառել ճիշտ, քանի որ վճարում ընդունող կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից անճշտություններով կամ թերի ներկայացված վարկային կոդի կիրառման հետևանքով իրականացված (կամ չիրականացված) սխալ վճարման համար:
- վարկային կոդի տրամադրումը չի բացառում հաճախորդի ցանկությամբ այլ եղանակով վճարման (մարման) իրականացումը,
- Վարկային կոդի տրամադրման կամ սպասարկման համար հաճախորդից վճարներ չեն գանձվում:

Վարկային կոդի կառուցվածք**



* «Վարկային գործառնության և կրեդիտի դիմաց վճարման հատուկ կարգ սահմանելու, ինչպես նաև վարկային կոդերի կառուցվածքը սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդի 20 դեկտեմբերի 2016 թվականի թիվ 238-Ն որոշում:
** **Կրեդիտ** հասկացությունը օգտագործվում է որպես պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, վարկ, ֆինանսական վարձակալություն (լիզինգ), ինչպես նաև օգտագործվում է որպես ցանկացած այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որի նպատակը ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է: